ԱՄԲԵՐԴ

ՀՊՏՀ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականությունը և արտարժույթի շուկաները
Ամսական տեսություն
(Հունիս 2018թ)

ԵՐԵՎԱՆ 2018

Հարգելի այցելու,

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված Ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների ամսական տեսությունը հրապարակվում է ամսական հաճախականությամբ և իրենից ներկայացնում է ՀՀ ֆինանսական շուկաներում իրականացված գործարքների ամփոփ վերլուծություն: Այն իր մեջ պարունակում համաշխարհային ապրանքյաին և ֆինանսական շուկաներում տեղի ունեցած գործընթացների ու միտումների ամփոփ տեղեկատվություն. ՀՀ մակրոտնտեսական հիմնական ամսական ցուցանիշների դիտարկում. ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության ընթացքում իրակնացված գործառնությունների վերաբերյալ, ինչպես նաև պետական, կորպորատիվ արժեթղթերի շուկաների և միջբանկային շուկաներում կնքված գործարքների վերաբերյալ ամփոփ վերլուծություն:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումների վերլուծության նպատակը այս շուկաներում տեղի ունեցող գործընթացները տեսանելի դաշտում պահելն ու դրանց ազդեցությունը ՀՀ եվրոպարտատոմսերի, ՀՀ ներքին ֆինանսական շուկայի և ընդհանրապես՝ երկրի մակրոտնտեսական վիճակի վրա հասկանալն է, ինչը, նկատի ունենալով ազդեցությունների լագային(ժամանակային առումով խզված) բնույթը, կարևոր է մեր տնտեսության համար ապագա զարգացումների կանխատեսման տեսանկյունից: Մյուս կողմից՝ համաշխարհային կապիտալի շուկաներում ներդրողներ են նաև ՀՀ սուբյեկտները(ԿԲ, կենսաթոշակային ֆոնդեր, այլ ինստիտուտներ և անհատներ), ինչը ևս կարևոր է դարձնում այստեղ ընթացող զարգացումների վերլուծությունը: Այս՝ ամսական պարբերականությամբ հրապարակվող տեսությունը ամփոփում է ՀՀ եվրոպարտատոմսերի, համաշխարհային ապրանքային(մետաղներ, էներգակիրներ, պարենային ապրանքներ), արժութային(դոլարի ինդեքս, եվրո, ՌԴ ռուբլի) և կապիտալի(զարգացող և զարգացած երկրների ֆոնդային ինդեքսներ և պետական պարտատոմսերի եկամտաբերություններ) շուկաներում տեղի ունեցող զարգացումների վերլուծությունը: Ամսական տեսությունը հիմնվում է Investing.com հարթակի հրապարակած վիճակագրության վրա, իսկ վերլուծությունների հիմքում Reuters գործակալության տեղեկատվական ու վերլուծական հրապարակումներն են և սեփական դիտարկումները: ՀՀ սոցյալ տնտեսական վիճակի հետ կապված հիմնական ցուցանիշների ներկայացումը նպատակ ունի ներկայացնել ՀՀ տնտեսական ակտիվության, տնտեսության հիմնական ճյուղերի զարգացումների, սպառողական և արդյունաբերական գների ինդեքսների, արտաքին ապրանքաշրջանառության և բնակչության միջին ամսական աշխատավարձերի ընդհանուր միտումները, ինչը թույլ է տալիս գնահատել Ֆինանսական շուկաների վրա մակրոտնտեսական և սոցյալ-տնտեական ընդհանուր վիճակի ազդեցությունները: ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության շրջանակներում ներկայացված են ԿԲ կողմից կիրառվող անուղղակի գործիքների կիրառումը, դրանց շրջանակներում իրականացված գործարքները, ինպես նաև դրամական զանգվածի կառուցվածքը և դրանում իրականացվող փոփոխությունները: ՀՀ արտարժույթի շուկայի հետ կապված ներկայացված են ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ՌԴ ռուբլու բորսայական, արտաբորսայական, ներբանկային և միջբանկային գործարքները, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի շուկայում իարկանացված գործառնությունները: Արժեթղթերի շուկայի վերլուծությունը բաղկացած է պետական և կորպորատիվ

արժեթղթերի շուկաների հետ կապված դիտարկումներից: Պետական պարտատոմսերի շուկայի հետ կապված ներկայացվում են առաջնային շուկայում դրանց տեղաբաշխումները, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետգնումները, բորսայական և արտաբորսայական շուկաներում կնքվող գործարքները, գործակալ բանկերի կողմից բորսայական գնանշումները, ինչպես նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի փոփոխությունները: Կորպորատիվ արժեթղթերի շուկայի հետ կապված ներկայացվում են բորսայական և արտաբորսայական տեղաբաշխումները, բորսայական շուկայում կնքված գործարքները, դրանց շուկա ստեղծողների գնանշումները: Միջբանակային շուկայի վերլուծությունն իրենից ներկայացնում են միջբանկային վարկային, սվոփ և ռեպո շուկաների ամփոփ դիտարկումներ:

Ամբերդ հետազոտական կենտրոնի կողմից ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների վերաբերյալ հրապարակվող ամփոփագրի տեղեկատվական հիմքերն են ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական Բանկի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ հրապարակումները և վիճակագրական աղբյուրների բազաները: Ձեզ ներկայացվող վիճակագրական աղյուսակների, գծապատկերների և ներկայացվող տվյալների մի մասը նշված մարմինների կողմից օրական կտրվածքով հրապարակվող տվյալների համախմբման արդյունք են:

Սույն վիճակագրական նյութերը, վերլուծությունները և դիտարկումները ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի մտավոր սեփականությունն են և դրանցից օգտվելու դեպքում հղումը կենտրոնի կայքին պարտադիր է:

«Ամբերդ» հետազոտական կենտրոն
Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք Հեռ.՝ (+37410) 593-479 Էլ. հասցե՝ info@amberd.am

Բովանդակություն

Ամփոփում.....5
1. ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականություն և դրամավարկային գործառնություններ.....7
2.Դրամական զանգված և փողի ագրեգատներ.....11
3.Արտարժույթի շուկաներ.....13

Ամփոփում

Ամփոփելով 2018թ. հունիս ամսվա ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության շրջանակներում և արտարժութային շուկաներում կնքված գործարքներն ու իրադարձությունները՝ առանձնացնեք հետևյալը.

1. 2018թ. հունիս ամսվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է անփոփոխ պահել դրամավարկային քաղաքականության հիմնական տոկոսադրույքները:
2. Ամսվա ընթացքում կնքվել է 4 ռեպո գործարք՝ 100,000,000,000 ՀՀ դրամ ծավալով, ինչպես նաև 9 Լոմբարդային ռեպո գործարք՝ 41,000,000,000 ՀՀ դրամ ծավալով: Նշենք, որ նախորդ ամսվա ընթացքում կնքվել էր 5 ռեպո գործարք, իսկ լոմբարդային ռեպոյով կնքվել էր 8 գործարք: Դրամական միջոցների ներգրավման սակարկությամբ գործարքների ծավալը նախորդ ամսվա նկատմաբ աճել է ավելի քան 21 տոկոսով, չնայած այն հանգամանքին որ գործարքների քանակը պակասել է: Հունիս ամսին կնքվել է 1 գործարք 35,400,000,000 ՀՀ դրամ ծավալով: Դրամական միջոցների ներգրավմամբ կնքվել է 9 գործարք՝ 155,950,000,000 ՀՀ դրամ գումարային ծավալով, ինչը նախորդ ամսվա համեմատ աճել է 1.2 տոկոսով:
3. Դրամավարկային քաղաքականության շրջանակներում կնքվող գործարքների արդյունքում ՀՀ կենտրոնական բանկը նպաստել է իրացվելիության կրճատմանը: ՀՀ կենտրոնական բանկի հունիս ամսվա գործարքների արդյունքում էական տատանումներով հանդերձ փողի բազան ամսվա վերջին սկզբի համեմատ աճել է 5.53 տոկոսով: Փողի բազայի կառուցվածքում շուրջ 52 տոկոսը եղել է ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը, ինչը նախորդ ամսվա համեմատ աճել է 1.3 տոկոսով:
4. Արտարժույթի բորսայական շուկայում 2018թ. Հունիս ամսվա ընթացքում գործարք չի կնքվել: Չեն եղել նաև առաջարկի և պահանջարկի հայտեր:
5. Հունիս ամսվա ընթացքում արտարժույթի Ներբանկային շուկայում գնվել է 362,431,466 ԱՄՆ դոլար՝ 481,97 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել է 369,271,550 ԱՄՆ դոլար՝ 483,13 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով: Ընդ որում, միջին կշռված փոխարժեքի 1,21 տոկոս նվազման պայմաններում հունիս ամսին մայիս ամսվա համեմատ ԱՄՆ դոլարի առքը նվազել է 5,67 տոկոսով, իսկ վաճառքն նվազել է 4,52 տոկոսով:

6. Հունիս ամսվա ընթացքում արտարժույթի միջբանկային շուկայում գնվել է 68,700,000ԱՄՆ դոլար՝ 482,84 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով և վաճառվել է 69,500,000 դոլար՝ 482,84 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով: Մայիսլ ամսվա համեմատ հունիս ամսին գործարքների ծավալն աճել է 80,50 տոկոսով, իսկ միջին փոխարժեքը նվազել է 0,14 տոկոսով:
7. Հունիս ամսվա ընթացքում արտարժույթի Ներբանկային շուկայում գնվել է 41,406,549 Եվրո՝ 561,66 դրամ մեկ Եվրոյի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել 87,076,689 Եվրո 568,55 դրամ մեկ եվրոյի դիմաց միջին փոխարժեքով: Ընդ որում առքի միջին կշռված փոխարժեքի 28 տոկոս նվազելու պայմաններում մայիս ամսվա համեմատ հունիս ամսին Եվրոյով առքի գործառնությունների ծավալը աճել է 14,21 տոկոսով՝ 4,72 տոկոս փոխարժեքի նվազման պայմաններում, իսկ վաճառքի միջին կշռված փոխարժեքի 24 տոկոս նվազման պայմաններում մայիս ամսվա համեմատ հունիս ամսին Եվրոյով վաճառքի գործառնությունների ծավալը աճել է 23,74 տոկոսով 4,07 փոխարժեքի նվազման դեպքում:
8. Հունիս ամսվա ընթացքում արտարժույթի Ներբանկային շուկայում գնվել է 5,846,205,337 ռուբլի 7,64 դրամ մեկ ռուբլու դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել է 2,529,604,015 ռուբլի 7,73 դրամ մեկ ռուբլու դիմաց միջին փոխարժեքով: Մայիս ամսվա համեմատ Ռուբլով առքի գործառնությունների ծավալը աճել է 52,52 տոկոսով շուրջ 2,86 տոկոս փոխարժեքի նվազման պայմաններում, իսկ վաճառքի գործառնությունների ծավալը նվազել է 4,10 տոկոսով 3,52 տոկոս փոխարժեքի նվազման դեպքում:

1. ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականություն և դրամավարկային գործառնություններ

2018թ. հունիս ամսվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվել են բաց շուկայական գործառնություններ, կիրառվել են մշտական հնարավորության գործիքներ, մինչդեռ դրամավարկային քաղաքականության հիմնական տոկոսադրույքները մնացել են անփոփոխ: Տոկոսադրույքների փոփոխության դինամիկան 2013-2018թթ. ցույց տանք գծապատկերի միջոցով.

Գծապատկեր 1. ՀՀ Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների դինամիկան 2013-2018թթ.



2018թ. հունիս ամսվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության իրականացման շրջանակներում դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները չի փոփոխել: 2018թ. հունիսի վերջի դրությամբ սահմանված են եղել դրամավարկային քաղաքականության հետևյալ տոկոսադրույքները՝

- դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույք - 4,5%,
- լոմբարդային ռեպո տոկոսադրույք - 7,5%,
- վերաֆինանսավորման տոկոսադրույք - 6%:

2018թ. հունիս ամսվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության շրջանակներում իրականացրել է հիմնականում իրացվելիության ավելացմանը միտված բաց շուկայական գործառնություններ: Այսպես, 2018թ. հունիս ամսվա ընթացքում կնքվել է դրամական միջոցների ներգրավման սակարկության 1 գործարք 35,400,000,000 ՀՀ դրամ ծավալով, իսկ ռեպո գործիքով կնքվել է 4 գործարք 100,000,000,000 ՀՀ դրամ ծավալով: Միաժամանակ նշենք, որ նախորդ ամսվա ընթացքում կնքվել էր 5 ռեպո գործարք 67,900,000,000 ՀՀ դրամ ծավալով, իսկ դրամական միջոցների ներգրավման սակարկությամբ գործարքների ծավալը հունիս ամսին նախորդ ամսվա համեմատ աճել է շուրջ 21 տոկոսով: 2018թ. հունիս ամսվա ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բաց շուկայական գործառնությունների շրջանակներում կազմակերպած գործառնությունների արդյունքները ներկայացնենք աղյուսակի միջոցով.

Գծապատկեր 2. 2018թ. հունիս ամսվա ընթացքում իրականացված բաց շուկայական գործառնությունները



Դիտարկվող ժամանակահատվածում բաց շուկայական գործառնությունների շրջանակներում իրականացված դրամական միջոցների ներգրավման սակարկությունների գործարքի ժամկետայնությունը եղել է 14 օր: Ընդհանուր ծավալային առումով դրամական միջոցների ներգրավման սակարկությունների գործառնությունների ներկայացված առաջարկությունների ծավալը համապատասխանել է բավարարված ծավալին: Դրամական միջոցների ներգրավման սակարկությունների գործառնությունների տոկոսադրույքը հունիս ամսվա ընթացքում նախորդ ամսվա համեմատ նվազել է:

Ներկայացված առաջարկությունների առավելագույն և նվազագույն տոկոսադրույքների սպրեդը կազմել է 0.11 տոկոս: Դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում դրամական միջոցների ներգրավման սակարկությունների գործարքին մասնակցել են 8 մասնակիցներ:

Դիտարկվող ժամանակաշրջանում կնքվել է 4 ռեպո գործարք 100,000,000,000 ՀՀ դրամ ծավալով, 6.19 միջին կշռված տոկոսադրույքներով: Հարկ է նշել նաև, որ առաջարկված գումարը 24 տոկոսով գերազանցել է բավարարված ծավալին: Ամսվա վերջի գործարքին մասնակցել է 2, իսկ նախորդ գործարքներին 4-7 մասնակիցներ:

Ընդհանուր առմամբ 2018թ. հունիս ամսին ՀՀ ԿԲ-ն բաց շուկայական գործառնություններ իրականացնելիս նպաստել է իրացվելիության ավելացմանը:

2018թ. հունիս ամսվա ընթացքում կիրառվել են ինչպես լոմբարդային ռեպո (նպաստում է իրացվելիության ավելացմանը) այնպես էլ դրամական միջոցների ներգրավման (նպաստում է իրացվելիության կրճատմանը) գործարքներ: Ամսվա ընթացքում կնքվել է լոմբարդային ռեպո գործիքի կիրառմամբ 9 գործարք՝ 75,801,170,460.00 ՀՀ դրամ գումարային ծավալով, իսկ դրամական միջոցների ներգրավման գործիքի կիրառմամբ ևս 9 գործարք՝ 155,950,000,000 ՀՀ դրամ գումարային ծավալով: Համեմատելով մայիս ամսվա համապատասխան ցուցանիշների հետ՝ նշենք, որ դրամական միջոցների ներգրավման գործարքների ծավալը աճել է շուրջ 1.2 տոկոսով, իսկ լոմբարդային ռեպո գործարքների ծավալը նախորդ ամսվա համեմատ նվազել է շուրջ 46 տոկոսով:

Գծապատկեր 3. 2018թ. հունիս ամսվա ընթացքում մշտական հնարավորության գործիքներով իրականացված գործառնությունները





Բոլոր տեսակի գործարքների ժամկետը կազմել է 1 օր: Մասնակիցների առավելագույն քանակն արձանագրվել է հունիսի 12-ին՝ դրամական միջոցների ներգրավման շրջանակներում. գործարքին մասնակցել են 7 մասնակիցներ: Ամսվա ընթացքում տեղի ունեցած մնացած գործարքներին մասնակցել են 1-4 մասնակիցներ:

Դիտարկվող ժամանակահատվածում դրամական միջոցների ներգրավման գործարքները կնքվել են 4,50 տոկոսով: Համեմատելով նախորդ ամսվա հետ՝ նշենք, դրամական միջոցներերի նեգրավման տոկոսադրույքները նախորդ ամսվա համեմատ չեն փոխվել:

Հունիս ամսվա ընթացքում դրամական միջոցների ներգրավման գործարքների առավելագույն ծավալն արձանագրվել է հունիսի 12-ին՝ 67,000,000,000 ՀՀ դրամ:

Լոմբարդային ռեպո գործիքի կիրառմամբ կնքվել է 9 գործարք՝ 41,000,000,000 ՀՀ դրամ ծավալով՝ 7,5 տոկոս միջին կշռված տոկոսադրույքով: գործարքնին մասնակցել են 1-2 մասնակիցներ:

Դրամական միջոցների ավելցուկների և պակասուրդների նման տատանումները առևտրային բանկերի մոտ հիմնականում պայմանավորված են պահուստավորման փուլերով և ՀՀ առևտրային բանկերի իրացվելիության ավելցուկով: Իրացվելիության ավելցուկն էլ իր հերթին պայմանավորված է 2017թ. –ին Ընդհանուր կապիտալի նորմատիվի մեծացմամբ:

Հունիս ամսվա ընթացքում կնքվել է նաև Արտարժույթի ներգրավման սվոփ գործիքով 1 գործարք 25,000,000 ՀՀ դրամ ծավալով՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 32 տոկոսով:

2018թ. հունիս ամսվա ընթացքում ՀՀ ԿԲ–ն մշտական հնրավորության գործիքների միջոցով ևս նպաստել է իրացվելիության կրճատմանը:

2.Դրամական զանգված և փողի ագրեգատներ

2018թ. հունիս ամսվա ընթացքում փողի բազան էական տատանումներով հանդերձ, դրսևորել է հիմնականում աճման միտում: Հունիս ամսվա սկիզբը նշանավորվել է փողի բազայի որոշակի աճով, որը տևել է մինչև հունիսի 4-ը, ինչի արդյունքում փողի բազան աճել է 2 տոկոսով: Հետագա օրերի ընթացքում փողի բազան կտրուկ անկումներ է ունեցել և հունիսի 12-ին հասել է ժամանակահատվածի նվազագույն մեծությանը: Հունիսի 12-ին փողի բազան հունիսի 4-ի նկատմամբ նվազել է 10.08 տոկոսով, իսկ հաջորդ օրը աճել է 9.77 տոկոսով: Այնուհետև փողի բազան որոշակի տատանումներով հանդերձ հիմնականում աճման միտում է դրսևորել, ընդ որում, ամսվա վերջին Փողի բազայի աճը ամսվա սկզբի նկատմամբ կազմել է 5.53 տոկոս: Փոփոխություններն հիմնականում պայմանավորված են եղել առևտրային բանկերի ՀՀ կենտրոնական բանկում բացված թղթակցային հաշիվների մնացորդների փոփոխություններով, ինչպես նաև ԿԲ վարվող դրամավարկային քաղաքականությամբ:

Գծապատկեր 4. Փողի բազայի փոփոխության դինամիկան 2018թ. հունիս ամսին



Կառուցվածքային առումով փողի զանգվածի մեջ հիմնական տեսակարար կշիռը կազմել է ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը՝ դիտարկվող ժամանակաշրջանում տատանվելով 52-ից 59 տոկոսի սահմաններում: Փողի բազայի կառուցվածքում զգալի է նաև ՀՀ դրամով թղթակցային

հաշիվների տեսակարար կշիռը: Վերջինս հունիս ամսվա ընթացքում տատանվել է 30-ից 38 տոկոսի սահմաններում: Արտարժույթով թղթակցային հաշիվների և այլ հաշիվների տեսակարար կշիռը փողի բազայի կառուցվածքում համեմատաբար փոքր է: Հունիսի 29-ի դրությամբ արտարժութային հաշվի տեսակարար կշիռը կազմել է 9.6%, իսկ այլ հաշիվների տեսակարար կշիռը 2%: Ինչ վերաբերում է ՀՀ դրամով թղթակցային հաշիվներին և ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի տեսակարար կշիռներին, ապա վերջիններս նույն օրվա դրությամբ կազմել են համապատասխանաբար 51.9% և 365%:

Գծապատկեր 5. Դրամական զանգվածի կառուցվածքը 2018թ. հունիս ամսին



3.Արտարժույթի շուկաներ

Արտարժույթի բորսայական շուկա

Արտարժույթի բորսայական շուկայում 2018թ. Հունիս ամսվա ընթացքում գործարք չի կնքվել: Չեն եղել նաև առաջարկի և պահանջարկի հայտեր:

Արտարժույթի արտաբորսայական շուկաներ

Արտարժույթի արտաբորսայական շուկայում հունիս ամսին գործարքներ են կնքվել ԱՄՆ դոլարով, Եվրոյով և Ռուբլիով:

ԱՄՆ դոլար

Հունիս ամսվա ընթացքում արտարժույթի Ներբանկային շուկայում գնվել է 362,431,466 ԱՄՆ դոլար՝ 481,97 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել է 369,271,550 ԱՄՆ դոլար՝ 483,13 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով: Ընդ որում, միջին կշռված փոխարժեքի 1,21 տոկոս նվազման պայմաններում հունիս ամսին մայիս ամսվա համեմատ ԱՄՆ դոլարի առքը նվազել է 5,67 տոկոսով, իսկ վաճառքն նվազել է 4,52 տոկոսով:

Գծապատկեր 4 . 2018թ. Հունիս ամսին Ներբանկային արժութային շուկայում ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը և փոխարժեքը



Հունիս ամսվա ընթացքում ԱՄՆ դոլարի փոխարժեքը դրսևորել է հիմնականում անկայուն միտում, մասնավորապես, առքի փոխարժեքը ամսվա վերջին ամսվա սկզբի համեմատ նվազել է 0,07 տոկոսով, իսկ վաճառքի փոխարժեքը չի փոխվել: ԱՄՆ դոլարի փոխարժեքի անկայունությունը, ըստ երևույթին, պայմանավորված է ՌԴ Ռուբլու ԱՄՆ դոլարի նկատմամբ ամրապնդմամբ և ՀՀ տնտեսության ՌԴ արժույթից կախվածությամբ: Դիտարկվող ժամանակաշրջանում արտարժույթի առքուվաճառքի սպրեդը տատանվել է 0,94 (հունիսի 14)- ից 1,48(հունիսի 1)-ի միջև:

Ինչ վերաբերում է Առքի և Վաճառքի գործարքների ծավալին, հունիս ամսին ԱՄՆ դոլար ավելի շատ գնվել է, քան վաճառվել: Գործարքների ծավալները անկայուն միտում են դրսևորել ամսվա ընթացքում, մասնավորապես, առքի գործարքների ծավալները տատանվել են 11900,891

(հունիսի 1) ԱՄՆ դոլարից մինչև 23890,926(հունիսի 27) ԱՄՆ դոլարի սահմաններում, իսկ վաճառքի գործարքի ծավալները տատանվել են 11754,623(հունիսի 22) ԱՄՆ դոլարից 29235,620 (հունիսի 26) ԱՄՆ դոլարի սահմաններում:

Հունիս ամսվա ընթացքում արտարժույթի միջբանկային շուկայում գնվել է 68,700,000ԱՄՆ դոլար՝ 482,84 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով և վաճառվել է 69,500,000 դոլար՝ 482,84 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով: Մայիսլ ամսվա համեմատ հունիս ամսին գործարքների ծավալն աճել է 80,50 տոկոսով, իսկ միջին փոխարժեքը նվազել է 0,14 տոկոսով:

Գծապատկեր 5. 2018թ. հունիս ամսին միջբանկային արժութային շուկայում ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը և փոխարժեքը



Միջբանկային արտարժութային շուկայում ամենաշատ ԱՄՆ դոլար գնվել և վաճառվել է հունիսի 13-ին՝ 6,900,000 ԱՄՆ դոլար՝ 482,82 դրամ՝ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով: Ամենաքիչը գնվել է հունիսի 18-ին՝ 482,75 դրամ՝ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով և վաճառվել է հունիսի 25-ին՝ 400,000 ԱՄՆ դոլար՝ 482,50 դրամ՝ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով: Ընդհանուր առմամբ ԱՄՆ դոլարի միջբանկային արժութային շուկան հունիս ամսին դրսևորել է փոխարժեքի նվազման միտում:

Եվրո

Հունիս ամսվա ընթացքում արտարժույթի Ներբանկային շուկայում գնվել է 41,406,549 Եվրո՝ 561,66 դրամ մեկ Եվրոյի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել 87,076,689 Եվրո 568,55 դրամ մեկ եվրոյի դիմաց միջին փոխարժեքով: Ընդ որում առքի միջին կշռված փոխարժեքի 28 տոկոս նվազելու պայմաններում մայիս ամսվա համեմատ հունիս ամսին Եվրոյով առքի գործառնությունների ծավալը աճել է 14,21 տոկոսով՝ 4,72 տոկոս փոխարժեքի նվազման պայմաններում, իսկ վաճառքի միջին կշռված փոխարժեքի 24 տոկոս նվազման պայմաններում մայիս ամսվա համեմատ հունիս ամսին Եվրոյով վաճառքի գործառնությունների ծավալը աճել է 23,74 տոկոսով 4,07 փոխարժեքի նվազման դեպքում:

Գծապատկեր 6. 2018թ. Հունիս ամսին Ներբանկային արժութային շուկայում Եվրոյով գործարքների ծավալը և փոխարժեքը



Հունիս ամսվա ընթացքում Եվրոյի փոխարժեքը էականորեն տատանվել է, մասնավորապես, առքի փոխարժեքը ամսվա վերջին ամսվա սկզբի դրությամբ նվազել է 4,04 տոկոսով (581,20 ՀՀ դրամից դառնալով 557,74 ՀՀ դրամ), իսկ վաճառքի փոխարժեքը նույն ժամանակաշրջանի ընթացքում նվազել է 4,17 տոկոսով (585,04 ՀՀ դրամից դառնալով 560,67 ՀՀ դրամ): Դիտարկվող ժամանակաշրջանում արտարժույթի առքուվաճառքի սպրեդը տատանվել է 2,60 (հունիսի 18)- ից 6,25 (հունիսի 15)-ի միջև: Փոխարժեքը ամսվա ընթացքում դրսևորել է անկայուն միտում: Հունիսի 29-ի դրությամբ առքի փոխարժեքը կազմել է 557,74, վաճառքինը՝ 560,67ՀՀ դրամ:

Ինչ վերաբերում է առքի և վաճառքի գործարքների ծավալին, ապա Եվրո ավելի շատ վաճառվել է, քան գնվել, ընդ որում, վաճառքի ծավալը շուրջ 2,1 անգամ մեծ է եղել առքի ծավալից: Առքի առավելագույն ծավալը արձանագրվել են հունիսի 28-ին՝ 3,986,391 Եվրո (555,92 փոխարժեքով), իսկ վաճառքինը արձանագրվել է հունիսի 4-ին՝ 13,794,597 Եվրո(567,58 փոխարժեքով): Ինչ վերաբերում է գործարքի նվազագույն ծավալներին,

ապա ամենաքիչ եվրոն գնվել հունիսի 11–ին՝ 1,271,847 Եվրո (566,43 փոխարժեքով) և ամենաքիչը վաճառվել է հունիսի 12-ին՝ 2,009,444 (570,86 փոխարժեքով):

Արտարժույթի միջբանկային շուկայում հունիս ամսվա ընթացքում Եվրոյով գործարքներ չեն եղել:

ՌԴ Ռուբլի

Հունիս ամսվա ընթացքում արտարժույթի Ներբանկային շուկայում գնվել է 5,846,205,337 ռուբլի 7,64 դրամ մեկ ռուբլու դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել է 2,529,604,015 ռուբլի 7,73 դրամ մեկ ռուբլու դիմաց միջին փոխարժեքով: Մայիս ամսվա համեմատ Ռուբլով առքի գործառնությունների ծավալը աճել է 52,52 տոկոսով շուրջ 2,86 տոկոս փոխարժեքի նվազման պայմաններում, իսկ վաճառքի գործառնությունների ծավալը նվազել է 4,10 տոկոսով 3,52 տոկոս փոխարժեքի նվազման դեպքում:

Գծապատկեր 7. 2018թ. Հունիս ամսին Ներբանկային արժութային շուկայում Ռուբլիով գործարքների ծավալը և փոխարժեքը



Հունիս ամսվա ընթացքում Ռուբլու փոխարժեքը դրսևորել է անկայուն միտում, մասնավորապես, առքի փոխարժեքը ամսվա վերջին ամսվա սկզբի համեմատ նվազել է 1,30%-ով (7,73 ՀՀ դրամից դառնալով 7,63 ՀՀ դրամ), իսկ վաճառքի փոխարժեքը նույն ժամանակաշրջանի ընթացքում նվազել է 1,58%-ով(7,83 ՀՀ դրամից դառնալով 7,71 ՀՀ դրամ): Դիտարկվող ժամանակաշրջանում արտարժույթի առքուվաճառքի սպրեդը տատանվել է 0,07(հունիսի 14, հունիսի 20, հունիսի 25)- ից 0,11 (հունիսի 12) - ի միջև:

Ինչ վերաբերում է առքի և վաճառքի գործարքների ծավալներին, ապա Ռուբլի ավելի շատ գնվել է, քան վաճառվել: Առքի առավելագույն ծավալը արձանագրվել հունիսի 25-ին՝ 429,586,967 Ռուբլի (7,60 ՀՀ դրամ փոխարժեքով), իսկ առավելագույն վաճառքի ծավալը հունիսի 19 -ին՝ 180,404,148 ռուբլի (7,61 դրամ փոխարժեքով): Ինչ վերաբերում է գործարքի նվազագույն ծավալներին, ապա ամենաքիչ ռուբլին գնվել է հունիսի 13-ին՝ 162,342,985 ռուբլի (7,62 ՀՀ դրամ փոխարժեքով) և ամենաքիչը վաճառվել հունիսի 15-ին՝ 74,091,236 (7,78 ՀՀ դրամ փոխարժեքով) ռուբլի:

Ստորև ներկայացնենք նաև ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու փոխարժեքների դինամիկան 2018թ. հունիս ամսվա ընթացքում.



Հունիս ամսվա ընթացքում ռուբլին անկայուն միտում է դրսևորել: Եվրոն անկայուն միտում է դրսևորել՝ առաջին հերթին պայմանավորված միջազգային շուկայի զարգացումներով: Իսկ ինչ վերաբերում է ԱՄՆ դոլարին, ապա այն ևս անկայուն է եղել: